

Լ. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵԴԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԿՐԿՆԱԿԻ ՄԻՋԳԾԱՅԻՆ ՀԻՐՐԻԴՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ծգիպտացորենի կրկնակի միջգծային հիբրիդների ստացման ժամանակ կարևոր է հաշվի առնել, թե նրանց ծնողական ձևերի ծաղկման ժամկետները որքանով են համընկնում միմյանց: Այս հարցը առանձնապես մեծ նշանակություն է ստանում արտադրության պայմաններում: Պետք է ապահովել մայրական ձևերի լրիվ փոշոտումը, այսինքն հասուն փոշեհատիկի ընկնելը հասուն սպիի վրա: Որոշ գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ փոշեհատիկը լավ ծլում է նաև լրիվ չհասունացած սպիի վրա, նրա ծաղկումից մի քանի օր առաջ, և տալիս է կենսունակ փոշեխողովակներ, որոնք հասնում են վարսանդին և սերմնաբողբոջին: Սակայն այդ դեպքում հատիկակալման տոկոսը ցածր է ստացվում, որովհետև սաղմնապարկի որոշ էլեմենտներ դեռ լրիվ հասունացած չեն լինում, որի պատճառով կրկնակի բեղմնավորում չի կատարվում: Հասուն սպիի փոշոտումը տալիս է հատիկակալման բարձր տոկոս: Այսպիսով, սելեկցիոն պրակտիկայում ծնողական ձևերի ծաղկման ժամկետների ճիշտ համընկնումը բերքատվությունն ապահովելու պայմաններից մեկն է: Հիբրիդներն այդ նպատակով ընտրելիս պետք է հաշվի առնել նրանց հասունացման ժամկետները:

Երկու մեկուսացված հողամասերում (Արարատյան հարթավայր) ուսումնասիրվել է մի շարք կրկնակի միջգծային հիբրիդների ծնողական ձևերի ծաղկման ժամկետների համընկնման հարցը:

Ծգիպտացորենի ծաղկափոշու հատիկները, ինչպես հայտնի է, 3—4 օր կարողանում են պահել իրենց կենսունակությունը, ուստի և հայրական բույսերի ծաղկման ժամկետից դեռ մի քանի օր հետո էլ մայրական բույսերի վարսանդի թելիկները կարող են փոշոտվել: Մյուս կողմից՝ վարսանդի թելիկները դուրս են գալիս նույնպես աստիճանաբար և մի քանի օր պահում են ծաղկափոշին ընդունելու իրենց ունակությունը:

Կրկնակի միջգծային հիբրիդներ ստանալու համար մենք օգտագործել ենք Կրասնոդարի գյուղատնտեսության գիտահետազոտական ինստիտուտից ստացված եգիպտացորենի հասարակ միջգծային հիբրիդային սերմերը, որոնցից 155×23 հասարակ միջգծային հիբրիդը հանդես է եկել որպես հայրական ձև առաջին մեկուսացված հողամասում և մայրական ձև՝ երկրորդում, իսկ 29×116 -ը՝ հայրական ձև երկրորդ մեկուսացված հողամասում և մայրական ձև՝ առաջինում: Մյուս մայրական ձևերը երկու հողամասերում էլ եղել են նույնը: Դրանք են՝ $\Gamma\Phi_9 \times 38$, 152×52 , $B\Phi_9 \times Hy$, 55×38 , 55×52 , 51×64 , $\Gamma B146 \times 38$, $CG22 \times B38$, 39×115 , $2K\mathcal{K}368 \times B38$, 44×38 .

Այս հիբրիդները դուրս գալուն պես հեռացվել են ազատ փոշոտում կատարվելու նպատակով և միաժամանակ նշվել են հայրական ձևերի

հուրանների և մայրական ձևերի կողրերի հանդես գալու ժամկետները: Փորձը կրկնվել է երկու տարվա ընթացքում:

Առաջին մեկուսացված հողամասի հայրական և մայրական ձևերի ծաղկման ժամկետների տարբերությունը կազմել է 1—4 օր, որի ընթացքում ապահովվել է նրանց լրիվ փոշոտումը: Երկրորդ հողամասի մայրական ձևերից միայն 155×23 հասարակ միջգծային հիբրիդի վարսանդի թելիկներն են, ոչոնք հայրական ձևի ծաղկումից 6 օր ուշ են հանդես եկել: Այս դեպքում ծաղկափոշին, հավանական է, կորցրել է իր կենսունակությունը, որի հետևանքով վարսանդի թելիկները հնարավորություն չեն ունեցել լրիվ փոշոտվելու, բուստի և հատիկակալման տոկոսը իջել է:

Հայտնի է, որ եգիպտացորենի հուրանները ավելի շուտ են հանդես գալիս, քան վարսանդի թելիկները և քանի որ 155×23 հասարակ միջգծային հիբրիդը մեր պայմաններում, մյուս հիբրիդների համեմատությամբ, առանց այն էլ ուշահաս է, հավանաբար այդ պատճառով էլ նրա վարսանդի թելիկների առաջացման ժամկետն այնքան էլ լավ չի համընկել հայրական ձևի ծաղկման ժամկետին: Հաշվի առնելով այդ հանգամանքը, փորձնական հողամասերում կարելի է կատարել ժամկետային ցանք:

Փորձի երկու տարվա տվյալները ցույց են տվել, որ փորձարկվող կրկնակի միջգծային հիբրիդների մայրական բույսերի վարսանդի թելիկների հանդես գալու ժամկետը, բացառությամբ 155×23 հասարակ միջգծային հիբրիդի, հիմնականում համընկել է հայրական բույսերի ծաղկման ժամկետին, որը և հանդիսանում է անհրաժեշտ պայմանը հիբրիդային եգիպտացորենի զարգացման համար:

Երևանի պետական համալսարանի
կենսաբանական ֆակուլտետ

Ստացվել է 14.1 1964 թ.